ՊՈԵՏԻՆ

Մեր ուշքն ինչո՞ւ ես կախարդում
Սիրո անհոգ երգերով,
Մեր աչքն ինչո՞ւ ես դու խաբում
Ցնորական պատկերով։

Այս օրերում հարկավոր չեն
Զբոսանքներ հոգեկան,
Նայիր կյանքին, մեզ կանչում են
Մեր եղբայրներն օգնության։

Իսկ դու, անփույթ մեր տանջանքին,
Հարվածներին մեր բախտի,
Արբեցնում ես արթուն հոգին
Քաղցրը թույնով հեշտախտի։

Քո սիրային երգերի հետ,
Նայիր, սուգ ենք մենք անում.
Բավական է, կանգնիր, պոետ,
Կյանքի կռվի սահմանում։

Եվ տարածիր աջըդ անզեն
Ընդդեմ չարին մահաբեր,
Մենք էլ այնժամ քեզ հետ կասենք
«Մնաք բարյավ, կույս և սեր»։